ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

ՈՒ Ղ Ե Ր Ձ

«17» նոյեմբերի 2024 թվականի

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Նոյեմբերի 17-ին նշվում է Ուսանողների միջազգային օրը

Տոնի առթիվ շնորհավորում եմ միջին մասնագիտական և ԲՈՒՀ-երի ուսանողներին:

Ջերմորեն շնորհավորում եմ հատկապես Ստեփանավան համայնքի կրթական օջախներում սովորող մեր ուսանողներին:

Սիրելի ուսանողներ, ձեր երիտասարդական նորարար գաղափարներից ու ստեղծագործական մտքից, գիտելիքներից, ձգտումներից ու հայրենասիրությունից է կախված մեր համայնքի առաջընթացն ու զարգացումը, մեր հայրենիքի լուսավոր ապագան:

Ձեր կյանքի լավագույն նպատակներին հասնելու գործում ձեզ հաստատակամություն եմ մաղթում:

Եղեք առողջ, նպատակներով լի, միշտ պատրաստ՝ կատարելագործվելու և ինքնահաստատվելու, ձեր գիտելիքը ծառայեցնելու հանուն հարազատ բնօրրանի զարգացման:

Բարին ձեզ հետ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**